

աւելէ ճառընտրին: Այսու պէտք է չափել զրպարի նախորդ էջին եւ յետագայից զաւանդանութիւնքն այլ:

Չորրորդ էջին առաջին սիւնակին մէջ յետ իններորդ տողի «գնդին իւրոյ քան զհայոց» բառից (տպ. 211) իսկոյն կը յարէ ըստ Կոնիքերի. «Իսկ... ինքին հայոց սնինը յատրոցի, եւ ներքեայ գառն պարսից գալ ի յաղաղադարձան. որոց եկեալ, Հրամայիաց ոպանանել ի նոցանէ երկերիւր եւ տասննեքնոց այր», եւ այլն (տպ. 216): Մերն յետ իններորդ տողին միջոց կը թողու, եւ տասներորդ տողէն կը կարգաւ միայն «... եղին հայոց» . դարձեալ միջոց, եւ մետասաներորդ տողէն՝ «ոչ յարդոցի» եւ այլն: — Ինչպէս կը տեսնենք, այս տողերու մէջ Եղիշէի վեցերորդ եւ եօթներորդ յեղանակները կը միանան՝ մեր գործածած տպագրին չորս էջերու յապաւմամբ, եւ յաւելմամբ նոտարագիր տողից: Հիւս բոլորովին ակներեւ է Եղիշէի բնագրին աղաւաղումն. իմաստ մ'է՝ անկապ եւ թերի. թող առաջին անյարմար եւ սխալ բառերը, առանց որ եւ է յառաւընթաց տեղեկութեան յանկարծ «ամբար» մի դուրս կ'ելնէ, ուր «երթեալ գարն պարսից» (կը յորոշորեն, ինչ կ'ընեն, եւ զո՞վ, չկայ ինչ) գալ ի յաղաղութիւն» . ահա կը պակասին խօսքին կարեւոր մասունքն. եւ յետոյ միւս գրչ. եւ տպ. օրինակաց «երեքտասան» կը ռամկանայ «տասներեք» : Անգղիացի բանասէրը կը կարծէ՝ թէ հոս «չորս փղբրիկ տողերու մէջ պատմուած կը գտնենք այն՝ որ արդի Հրատարակութեանց մէջ մէկուկէս մեծագիր էջ կը լեցնէ» . նա իբր օտարագրի, չէր կարող ճանաչել քա՞ր թէ այդ շարագրութիւնը եւ լեզուն հայերէն չեն. այլ կամ արդիւնք համառօտեմի չանից անհմուտ ճառընտրողին, եւ կամ թուղթ ընկած էր այն զրչագրէն՝ յորմէ գաղափարուած է այդ, վասն զի պակասորդին չափն այլ համեմատական է: Իսկ մենք՝ կանոնաւոր լեզուն, ի մասսայի լրումն եւ հետեւաբար Եղիշէի բուն բնագիրը կը գտնենք միւս օրինակաց մէջ:

Ըսիմք՝ թէ այդ էջը կը միացնէ երկու յեղանակները, որոյ համար կ'ըսէ Կոնիքեր՝ թէ «թերեւս համեմատ է այն ծրագրին՝ զոր Եղիշէ իւր պատմութեան սկիզբը կը նախագծէ, ըսելով՝ թէ իւր պատմութիւնը պիտի աւանդէ յեքեք գոյսխս», մինչ այսօր ոչք չլուի են. զայս կը հաստատէ եւ տր. խալաթեան: — Տր. Կոնիքեր կը թուի չդիտած՝ թէ Եղիշէ կը

նախագծէ եւս ինչ որ պիտի պատմէ իւրաքանչիւր գլխոյ մէջ. որ է, ի վեցերորդին՝ «զընդդիմանալն հայոց պատերազմաւ», եւ յեքսներորդին «զյեղապարտմն իրացն խռովութեան» (6). եօթներորդի նիւթը կը գտնենք ոչ թէ ութերորդի, այլ այժմեան եօթներորդի մէջ. ուրեմն հարկ է որ սա զատ զլուի լինի վեցերորդէն, ինչպէս եւ է այսօր: Եղիշէ ութերորդի նիւթը բնու չի նախագծեր. ուրեմն սա պէտք էր եօթանց հայուն զուրս լինէր, ինչպէս եւ է: Իսկ երկու գլխոց միացումն ի մագաղաթի Կոնիքերին՝ ուրիշ փաստ մ'է անոր խանգարուած լինելուն:

Նոյն չորրորդ էջի երկրորդ սիւնակի վերջին երկու անընթեռնի տողից անծանօթ եւ ըստ բանասիրէի տարակուսական մնացորդը՝ ՅԱՆՆԱ եւ ՊՅԱՆ, զորս մեր գաղափարողը չէ կարգացած, ըստ մեզ՝ արդի բնագրի շարունակութեան հետեւեալ երկաթագրերն են. «Իսկ սուրբ քահանայն՝ Կոնիքերին՝ ուրիշ փաստ մ'է անոր խանգարուած լինելուն» (տպ. 217):

Այսպէս՝ տր. Կոնիքերի Հրատարակած պատահիկը չէ կարող տպագրուանել Եղիշէի բնագրին խանգարումն յայլ օրինակաւ:

Շարաշարեղի

ՏՊԱՐԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Ի ՄՈՍԿՈՒԱ

(Շար. տես Բո. ԾԻ, յէջ 544)

ԱՐԴՈՒԹԵԱՆ ՅՈՒՆԷՓ արքեպիսկոպոսէն ետքը հայկական տպարան մը բացուեցաւ ի Մոսկուա՝ Լազարեան կոչուած ճեմարանին մէջ:

Ծանօթ է ազգայնոց այդ մեծափառ տոհմին առատատուր նպատիւք եւ պետութեան օգնականութեամբ եւ պաշտպանութեամբ կանգնուած ու յառաջադէմ եղած այդ մեծ հիմնար. կուլիւնը. և թէ ինչպէս բաց ի ուրիշ ուսմանց սահմանուած էին արեւելեան լեզուք:

Այս առթիւ ճեմարանին շինութեանց մէջ մասնաւոր յիշատակութեան և մտադրութեան արժանաւոր է տպագրատունն, հաստատուած ի 1829, տէրութեան ներքին պաշտօնէին

* Այդպէս ունի բառը եւ մեր նախորդ գլխոյն Ա հաղորդութիւն:

հրամանադրովն ու հաճութեամբ. յորում կը գտնուէին եւրոպական ամեն ազգաց և արեւելեան գլխաւոր լեզուաց տառեր :

Մեր հորց մին Հ. Եփրեմ վ. Սեթեան՝ Ախցխայէն գրած նամակաց միոյն մէջ, (1834), այսպէս կը գրուատէ զՎարժարանն. « քսանամենիւք յառաջ ի Մոսկով Եղիա՝ զարեանց ճեմարանն կանգնեալ՝ ոչ սակաւ մխիթարութիւն է Հայոց բնակելոց ի Ռուսիա, ուր ի ձեռն զանազան վարժապետաց՝ ուսուցանեն կարեւոր գիտութեանց զբովանդակութիւնն և գեղգուս պիտանին » :

Տպարանին մէջ թէ՛ հայ և թէ՛ ուրիշ լեզուաց տառեր՝ հին տնով էին. բայց ետքը ստացուեցան, մանաւանդ մեր լեզուին համար, ի Մխիթարեանց որ ի վիեննա, նոր և գեղեցիկաձև տառեր տոնուլ, որոնցմով եղան վերջին տպագրութիւնը : Առջին հրատարակութեանց մեծագոյն մասը, Սալլանթեան Միքայէլ վարդապետին՝ ճեմարանին առաջին տեսչին, կամ իր աշակերտաց անուանքը կը կրեն, բայց ուրիշ հետաքննական զուածներ աչ երեցած են այն տպարանէն. ինչպէս Կլինքայի ի ռուս լեզու՝ Հայոց ազգին և պատմութեան վերաբերեալ հին ու նոր ժամանակաց հաւաստեցայքը, յերիս հատորս, և Բառարան հայ-տու. Ալեքսանդրի խուզաբշնի երկաթրութիւն, յերկուս հատորս, որուն տպագրութիւնը 40,000 ռուբլիի եղաւ Յովհաննէս աղայի Լազարեան, կ'ըսէ, հալազէան Դիւլորիէ, այդ ապին տոհմին ընծայած մէկ գրութեանը մէջ :

Սալլանթեանէն ետքը, նոյն տպարանին վերայ խնամք ունեցաւ Մանեան Մագիստրոսը և իր Զարմայր որպիսի, Հօրը և որդոյն կրօնական ու բանասիրական գրուածներն արդէն յայտնի են ընթերցողաց, և Մատենադարանութեան մէջ անոնց ցուցակը դրուած է :

Վրան ժամանակ անցաւ, և աւելի շահաւոր սեպուելով վարժարանին մէջ մասնաւոր տպարան չունենալը, օտարաց վաճառեցան այն տառերը : Արդէն 1850 թուականին Միքայիլ Էմին՝ որ նոյն ճեմարանին Ի՞նչ հայերէն լեզուի ուսուցչապետն էր, իր զգրեւէն շատը ուրիշ օտար տպարաններ տպել տուաւ, 1850 թուականէն ի վեր վ. Կո-

թիէի բով իւր Վէպք հնոյն Հայաստանի գիրքը և ուրիշ գրուածներ, որուն հետեւեցան ուրիշներ թէ Մոսկուայի և թէ Պետերբուրգի մէջ : Այս երկու քաղաքներ ժամանակին զարգացման հետ, նաև հայ տպագրութիւնն շատ կատարելագործեցին, ինչպէս յայտնի է Արաքս վեցամեայ պարբերականէն, Հանդես գրականականէ և ուրիշ զրբերէ :

Կը յիշեն ընթերցողք թէ Ալլազովսքի վարդապետն՝ Խաչիպետն ուսումնարանն հաստատեց ի Թէոդոսիա Ղրիմու, և ի Պարսէ հոն փոխադրեց Մասեաց Աղաանի լրագրին տպարանն : Եւրոպայի առաջին և արուեստագետ քաղաքներէն մէկէն՝ Ռուսիոյ չորրորդական համարուած քաղաք մը, տպարանին և լրագրին փոխադրուելը՝ հարկաւ իր ազդեցութիւնը պիտի ունենար, զեթ արուեստի կողմանէ՝ ինչպէս ալ եղած է, բայց իր օգուտն մեծ, ազգին մէջ ծաւալելով գիտութիւնն այն քիչ տարիներուն մէջ, յորում այդ տպարանն ինչպէս նաև զպրոքի՝ իրենց գոյութիւնն ունենալով, թէ՛ հրատարակութիւններ և թէ՛ աշակերտներ հանեցին : Ալլազովսկի՝ Գէորգ կաթողիկոսէն նախ Էմիմովին կանչուեցաւ տեսուչ համանուն ճեմարանին, և ապա առաջնորդ Տփղիսու, և այդ պաշտաման մէջ հանդիպեցաւ իր մահը :

Թէոդոսիա եղած տտենէն՝ տպարանին զործը և զբաւաճաւութիւնը յանձնած էր Տէր Աբրահամեան անունով անձի մը. երբ զըպրոցէն և Բեսարաբիոյ առաջնորդութիւնէն ստիպուեցաւ քաշուիլ Ալլազովսքի և առանձնանալ, Տէր Աբրահամեան տէր եղաւ տպարանին ու փոխադրեց զայն ի Ռոստով կամ ի Նոր-Նախիճևան, ուր ցայսօր կը զործէ հանդերձ գրամատուցութեամբ :

Այս քաղաքներէն զատ չենք յիշեր՝ որ ի Ռոսիա ուրիշ տեղ մը հաստատուած ըլլայ հայկական տպարան, բաց ի մանրմունք հրատարակութիւններէն, որ թիւս ուրիշ տեղ՝ ինչպէս ի Քիբով կամ այլուր եղած ըլլան : Երիցեան Պր. Աղեքսանդր՝ Արճազանք լրագրին 1896 տարւոյ մէկ թուոյն մէջ կը յիշատակէ թէ՛ դարուս սկիզբն՝ հայ հոռվմէականաց ձեռքով ետևէ եղած ըլլան Յիսուսեանք, ազգային օրագիր մը հրատարա-

կել յԱժտէրխան : Մեզի անծանօթ է այս օրագրի գոյութիւնն և սկզբնաւորութիւնը :

Բայց պէտք է յիշեցնենք ընթերցողաց, թէ մեզմէ գրեթէ կէս դար յառաջ Կովկասեան զաւառաց՝ մանաւանդ Տփղիսու մէջ՝ հայերէն լեզու գրեթէ ամենեւին չկար, ու տիրող բարբառը՝ մանաւանդ ժողովրդականութեան մէջ՝ վրաց լեզուն էր. իսկ այսօր իւր բազմաթիւ պարբերականներով, լրագիրներով ու հրատարակած գրքերով կարեւոր գիրք մը բռնած է մեր մատենագրութեան մէջ : Ասոր պատճառն ոչ միայն երկրին կառավարութեան լուսավոր քաղաքականութիւնն, այլ և ազգայնոց փոյլծն և ջանքն և իրենց դուրսնեանն են :

* * *

Կովկասեան զաւառաց մէջ, Յովսէփ վարդապետի մը արձախեցող անուան կը հանգիպենք, որ հայկական բառգիրք մը ստպադրած է ի Շուշի, բայց անկէ յառաջ է ժամանակաւ Ներսէս արքեպիսկոպոսն աշտարակեցի, որ կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսին ետքը կաթողիկոսական աթոռը նըստաւ :

Իր բազմաբկածեան վարուց պատմութիւնը յայտնի է, և ոչ մեր գրուածքին կը պատկանի յիշատակել, ինչ որ գործեց յԵջմիածին վարդապետութեան և գրագրութեան ժամանակ, ազգին և իրեն կուսակցաց բարւոյն գիտմամբ. յիշատակենք միայն որ նախ Տրփղեաց և Բեսարաբոյի առաջնորդ եղաւ : Իր անունը անմահանող եղաւ՝ Ներսիսեան վարժարանն ի Տփղիս՝ մինչ այդ քաղաքին առաջնորդն ու արքեպիսկոպոսն էր. ժամանակին ոչ լոկ ուսու՝ այլ և եւրոպացի ճանապարհորդք և գիտունք գովութեամբ կը խօսին թէ իր անձին և թէ գործոց վրայ : Մեզ արդէն յայտնի է, որ Եւրոպոյի զանազան կողմերէ վարդապետներ բերել և հոն ամուսկանալ հաստատելու ջանքն բոլոր, որոց մէջ էր Զրպետ եղեսացի :

Մասնաւոր փոյլծն ունէր նաև տպարան մը հաստատելու նոյն հիմնարկութեան կամ գլխոցին մէջ, ու ազգին օգտակար այլ և այլ

երկասիրութիւններէ զատ՝ օրագիր կամ յիշատակարան մը հրատարակել գրաբար լեզուով :

Իւր ազգասէր խորհրդոց համաժողովուրդէսրգ իշխան արծուռնի, և նորա գործունէութեամբ և օգնակութեամբ յԱմսդերտամբ քառ ճանապարհորդութեան ատեն, Ոսկանեան տառերը կամ անոնցմէ ետքը Սիմէոն կաթողիկոսին յանձնարարութեամբ շինուածնեք բերաւ հետք ի Տփղիս, պարսեքը հատուցանելով, որոց պատճառաւ զրաւի դրուած էին նոյն քաղաքին մէջ, հիմնեց հայկական առաջին տպարանն 1814ին, զոր ապա Ներսիսեան զարդցին ընծայեց, ինչպէս նշանակուած է նախկին տպագրութեանց ճակատը :

Երկու տպարանք կային յԱմսդերտամբ, մէկը Շարեքցոյն և Ոսկանի ձեռքով, իսկ միւսն՝ Վանանդեցի թովմա արքեպիսկոպոսին և իւր եղբորորդոյն Նուրիսան Ղուկասու : Անոնցմէ մեկուն գրերը Միխիթար Աբրահայր գնոց առաւ Յարութիւն վաճառականին ձեռքով, ինչպէս առաջ տեսանք. իսկ միւսները ատեն անցնելէն ետքը, Գևորգայ արծուռնոյ առատատէր տորւք, Ներսիսեան զարդցին ընծայուեցան : Ինքն Գևորգ արծուռնին ալ երկասիրութեան մը հեղինակ է, Դատաստան խրատուց գրոց, և այնպիսի ժամանակ մը, յորում գրող քեզ կը գտնուէին, և զիտութիւնն և լեզուք հոգեօրականաց առանձնաշատակութիւն մը սեպուած էին : Այսպիսի ատեն երեքեաւ Գևորգ արծուռնին :

* * *

Հարկ է անյիշատակ չթողուլ նաև Էնֆիէճեան եղբայրք :

Երբ՝ Ներսէս աշտարակեցին Քիշնեփէն յԵջմիածին փոխադրուելով, գիտութիւնք և ուսմունք սկսան բարգաւաճիլ Տփղիսու և բոլոր Կովկասու մէջ, Արեւելեան պատերազմն ալ վրայ հասաւ, և Եւրոպա աւելի ծանրացաւ Արեւելոյ. հազարակցութիւնք գիւրացան և գրեթէ նախկին հեռաւորութիւնները չմնացին :

Այն ատենները երեքան Էնֆիէճեան եղբայրք, Շիրմազանեան Գալուստ, Երիցեան

Աղբքսանդր և այլք իրենց հետ, որ ժամանակը և կառավարութիւնն իրենց օգնականն գտնելով, բոլորովին ուղեցին կերպարանափոխ ընել կովկասու Հայերը: Առաջինները տալարան մը բացին ի Տփղիս, նոր և ընտիր տառերով, և բաց ի զանազան զրգերէն՝ զոր կը խոստանային տալ հայերէն լեզուով, կը հրատարակէին նաև լրագիր մը կոչուելի աշխարհիկ Հայոց, հմուտ և հետաքննական նիւթերով և թարգմանութեամբք: Ասոր վրայ զիստ որ աշխատողն էր՝ Մարկոս Աղաբէգեան զմիւսնացի, իրեն զործակից լռեննալով՝ այլևայլ անձինք և եւրոպական յառաջադէմ ազգաց սովորութեամբ. յորագրին կը տպագրուէին զրամական հասուցմունք թէ՛ սկզբնական զրուածոց և թէ թարգմանութեանց համար:

Իրաւ է որ Աղաբէգեանէն յառաջ կը հրատարակուէին ի Տփղիս կովկաս և Արաբատ լրագիրք, որոնք որչափ ալ ունէին իրենց յարը՝ բայց ժամանակը յառաջ դացած էր, և պահանջը առաւելագոյն: Այս պահանջը լեցուց ատենին Կռսնկի ամսական թիւ և իրեն մեծագոյն արդիւնքը այն եղաւ՝ որ ճամբայ բացաւ ընտիր հրատարակութեանց ինչպէս են՝ Փորձ, Մշակ, Արձագանք, Նոր-Դար, Մոռք, Ալքիւր, Տարագ, Լուսա, Ազգագրական հանդես, և ուրիշ ամսօրեայ և կիսամեայ զրքեր և օրագրեր, յորոց բազումք ցայսօր կը հրատարակուին գրութեամբ:

Բաց ի օրագիրներէն՝ յիշատակութեան արժանի և Հրատարակական կոչուած ընկե-րաշինան որ հարիւրէ աւելի հրատարակութիւններ և ուրիշ պատուական երկասիրութիւնք ի լոյս բնծայած է:

Երևան, Դուշի, Աղբքսանդրապոլ և ուրիշ քաղաքաց մէջ ալ հաստատուած են ազգային այլևայլ տպարաններ: Մեզի ուրիշ բան չի մնար՝ բայց եթէ յաշողութիւն մաղթել ամենեւն:

Շարայարեկի



ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՅՈՒԹԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. տես. յէջ 18)

— 188 —

ԻՐԱՆԵԱՆ ծագումն ունի նոյնպէս վահագն, որ թերեւ Հայոց ամենէն աւելի բռնիկ ազգային եւ ժողովրդական շատուածն է: Արդէն Վինդիշման եւ մասնաւորապէս Լազարոյ նոյն կը համարին զայն՝ իրանեան յաղթութեան զից կամ ոգւոյն՝ վերելթրագնայի հետ: Ազաթանգեղոսի² մէջ վահագն* կը կոչուի այն շատուածն, որ Հայոց աշխարհին պաշտպան և խնամակալ երեք շատուածներուն մէջ երրորդ տեղը կը բռնէ: Բաց աստի՝ յիշեալ զրոց մէջ³ երկու անգամ կը գտնենք ամականաբար զործածուած « վահէ վահեան մահեան »: ասպ ուրեմն վահագնի հետ ունինք նաեւ վահեկահեկ անուան ձեւը, որ գուցէ՝ վահեկահեկի բրած ենթապրութեան համեմատ՝ իբր սպանդարամետական տօնից կամ զինեւրոպաց ձայնարկութիւն մ'է:

1. Armen. Studien, S. 141. Հմմտ. մահաւանդ, H. Hübschmann, armenische Grammatik I, S. 75 ff. und die Ausführungen S. 77.

2. Ազաթանգեղոս. Վենետ. 1835, էջ 403 եւ 603.

3. Անշ. յէջ 602 եւ 603.

* Բանասիրաց մէջ այլ եւ այլ կարծիք կամ վահագն անուամ ստուգաբանութեամբ մասին. ոմանք կը համարին զայն կազմուած՝ սամկըիտ վահ (Vah) արմատէն, որ կը մշամակէ քերել, քերող, եւ ազնի (agzi) գոյականէն, որ հուր կը մշամակէ. ապա ուրեմն վահագն է քերող-հող կամ հրաբուր (Հմմտ. Ազաթանգեղոս եւ այլմ, Բարսեղ Մարգարեանի, որ իւր կարծիքը հիւսմունքի վկայութեամբ կը հաստատէ. տ. Burnof, Dictionnaire Sanscr. - Français, Paris, 1869, p. 8, 573) իսկ այլք ուրիշ կերպով կը մեկնեն զայն. մոյմ կը համարին արեւական Bähag (որ կը կարդացուի Վահագ. Եփ - Վ) բառիմ հետ, եւ կը մշամակէ բաշխող (ի՞նչ բանի...): եւ կամ, կազմուած է կըրսն Bha կամ Bäh (վահ) արմատէն, որ կը մշամակէ բոց, աստղ. եւ agzi բառէն՝ որ կը մշամակէ հուր. աստի վահագն կը լինի բոց հող, հուր բոց (Վ. Վ. Նազարեթ. Հայ զիջաբանութիւն). այս վերջիմ մեկնութիւնս զրեթէ մոյմ է վերոյիշեալ մեկնութեամբ հետ: